05/1105-18
1/17.3/883-18

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

№ 68 -Ն

«26» 01 2018 թ. ք.Երևան

### «911» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԵՐԹԱՓՈԽԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԱՀԱԶԱՆԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ, ՓՈԽԱՆՑՄԱՆ, ՎԵՐԱԴԱՍ ՀՐԱ-ՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԻ, ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքով հաստատված փրկարարական ծառայության կանոնագրքի 94-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 259–Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Սահմանել՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) աշխատակազմի փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (այսուհետ՝ ՃԿԱԿ) «911» ծառայությունում օպերատիվ հերթափոխի կողմից քաղաքացիների և այլ անձանց ահազանգերի սպասարկման, տեղեկատվության ընդունման, գրանցման, փոխանցման, վերադաս հրամանատարների հրամանների, կարգադրությունների կատարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ ԱԻՆ ՓԾ ՃԿԱԿ պետին՝ սահմանված ժամկետներում ու կարգով ապահովել սույն հրամանի ներկայացումը ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Դ.ՏՈՆՈՅԱՆ